ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

Ի պատասխան Ձեր 29.11.2023թ. գրության՝ «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի վերաբերյալ, տեղեկացվում է, որ «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին առաջարկվող մարզագույքով ապահովելու հարցը կքննարկվի և, կարիքից ելնելով, կընդգրկվի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության 2024 թվականի արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ մարզագույքի ձեռք բերման ծրագրում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մարզիչների աշխատավարձի բարձրացման հարցն արդեն իսկ ընդգրված է վարչության 2024 թվականի ծրագրում:

Տեղեկացվում է նաև, որ Երևան համայնքի վարչական շրջաններում կառուցվել են բազմաֆունկցիոնալ մարզադաշտեր, որտեղ բոլոր ցանկացողները կարող են զբաղվել բասկետբոլով, ֆուտբոլով, վոլեյբոլով:

Արաբկիր վարչական շրջանի 2024թ. աշխատանքային ծրագրով նախատեսվում է իրականացնել մարզադպրոցի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես նախատեսվում է ամբողջությամբ փոխարինել հատակը, օդափոխության համակարգը, իրականացնել պատերի կոսմետիկ վերանորոգում, պատուհանների փոխարինում, ինչպես նաև տանիքի վերանորոգում:

Ներկայումս մշակվում է փաստաթղթերի փաթեթը՝ նախագծանախահաշվային մրցույթին մասնակցելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ